

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը ընդունում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին նրա 75-ամյակի առթիվ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին հանդիսությունների կապակցությամբ Մայր Աթոռ ժամանած Հայ Եկեղեցու ներքին և արտաքին հարաբերությունների թեմերի առաջնորդները, ինչպես նաև թեմական-եկեղեցական վարչությանց անդամները:

Վեհափառ Հայրապետը Հայկական ՍՍՀ կառավարության նախագահին ներկայացնում է Հայ Եկեղեցու հարգելի հյուրերին:

Ընդունելության ընթացքում Հայաստանի Մինիստրների խորհրդի մեծարգո նախագահը Ամենայն Հայոց կաթողիկոսին ջերմորեն շնորհավորում է նրա ծննդյան 75-ամյակի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրով պարգևատրվելու առթիվ, նրան մաղթում քաջառողջություն, նոր հաջողություններ իր հայրենասիրական բեղմնավոր գործունեության մեջ:

«Հայաստանի կառավարությունը,—ասում է Ֆադեյ Սարգսյանը.—բարձր է գնահատում Ձեր հայրենասիրական գործունեությունը հանուն խաղաղության, որ Դուք անդուլ կերպով ծավալում եք ահա արդեն 28 տարի՝ որպես Հայ Եկեղեցու Հովվապետ: Լինելով քրիստոնեական աշխարհի ամենաճանաչված և հեղինակավոր գործիչներից մեկը՝ Դուք ծանրակշիռ ավանդ եք ներդնում խաղաղության պաշտպանության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Արդի միջազգային լարվածության պայմաններում անհրաժեշտ է, որ մոլորակի բոլոր խաղաղասեր ուժերը իրենց ձայնը բարձրացնեն ի պաշտպանություն խաղաղության, հանուն համընդհանուր վինաթափման, հանուն այն բանի, որ մեկընդմիշտ բացառվի պատերազմի ծագման հնարավորությունը, խաղաղ գոյակցություն հաստատվի բոլոր ժողովուրդների միջև: Այս ազնիվ գործում կարևոր դեր է պատկանում նաև հոգևոր գործիչներին, և մենք ուրախ ենք, որ Հայ Առաքելական Եկեղեցին, որի գլուխ կանգնած եք Դուք, առաջնորդվում և գործում է այդ առաջադեմ գաղափարների ոգով:

Հանդիսանալով մեծ հայրենասեր՝ Դուք կգալի ավանդ եք ներդնում նաև սփյուռքահայությանը Մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի շուրջը համախմբվելու մեծ գործում»:

Ապա տիար Ֆադեյ Սարգսյանը ներկաներին պատմում է սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում հայ ժողովրդի արձանագրած ընկերային ու մշակութային առաջընթացի մասին:

Իր պատասխան խոսքում Վեհափառ Հայրապետն ասում է.

«Այս պահին ես հուզված եմ, որովհետև քիչ առաջ իջանք Ծիծեռնակաբերդի բլուրից, ուր մինչև աղոթեցինք մեր ժողովրդի զոհված զավակների համար, որոնք նահատակվեցին մեր դարի առաջին ցեղասպանության՝ 1915 թվականի այդ դաժան օրերին:

Մենք երախտապարտ ենք անհունորեն, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը, տասվին տարիներ առաջ, այս հոյակապ կոթողը բարձրացրեց ի հիշատակ մեր նահատակների: Ես համոզված եմ, որ այստեղ բոլոր ներկաներն առանց բացառության բաժանում են իմ այս զգացումները և նույնպես երախտապարտ են այդ հուշարձանի կառուցման համար: Ամեն անգամ, երբ մենք բարձրանում ենք Ծիծեռնակաբերդ մեր հարգանքի տուրքը մատուցելու մեր նահատակներին, չենք մոռանում նրանց ուխտը, նրանց իդեալները, որոնց համար նրանք զոհվեցին իբրև քրիստոնյաներ և իբրև հայ ժողովրդի հարապատ զավակներ: Ամեն մի նոր այցելություն Ծիծեռնակաբերդ է՛լ ավելի է ամրապնդում մեր զգացումները՝ հավատարիմ մնալու նրանց ուխտին և հայ ժողովրդի արդար դատին»:

Շարունակելով իր խոսքը՝ Վեհափառ Հայրապետը շնորհակալություն է հայտնում մեծահարգ նախագահին այն բարյացակամ վերաբերմունքի համար, որ նա, իբրև գլուխ մեր կառավարության, ցուցաբերում է Հայ Եկեղեցու և հատկապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ: «Ես, հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և իմ հոգևոր եղբայրների, այս պաշտոնական առիթով ուզում եմ իմ երախտագիտությունը ներկայացնել Ձեզ և Ձեր միջոցով՝ մեր հանրապետության կառավարությանը»:

Վերջում մեծահարգ նախագահը կրկին անգամ շնորհավորում է Վեհափառ Հայրապետին և բաժակ բարձրացնում Հայ Եկեղեցու հոգևոր պետի կյանքի արևշատության համար:

Ընդունելության ընթացքում Հայաստանի կառավարությանը իր շնորհակալական խոսքն է ասում նաև Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը՝ նշելով.

«Ամենայն Հայոց Հայրապետի թույլտվությամբ կուզեմ մեր բոլորին ուրախությունը և գոհունակությունը արտահայտել:

Ուրախության առիթները զանազան են մեր ժողովուրդի կյանքին մեջ: Կուրախանանք մեր սուրբերու կյանքով, մեր հերոսներու կյանքով, մեր հայրենի պետության իրագործումներու առիթով, բազմաթիվ տարեդարձներու հիշատակությամբ:

Այսօր, սակայն, ուրիշ ուրախություն մը կավելնա այդ բոլորին վրա:

Մեր ժողովուրդի պատմության ընթացքին մեկի երկու թանկագին ավանդներ ժառանգ հասած են: Այս երկու թանգակին ավանդներեն մեկը այս ափ մը հողն է հայրենի, պատմական Հայաստանեն: Ձեր խոսքին մեջ հիշեցիք, թե երեսուն հազար քառակուսի կիլոմետր է միայն այս ափ մը հողը: Մեր պատմական հայրենիքը տասն անգամ ավելի է: Եվ մեր հայրենի կառավարությունը իրավատերն է այդ պատմական Հայաստանին:

Այսօր, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, կներկայանանք մեր հայրենի կառավարության վարչապետին, որովհետև ան իր անձին մեջ և իր պաշտոնին միջոցավ, ինչպես Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսը իր խռաքին մեջ հայտնեց, կխտացնե իր ժողովուրդին պատմությունը, գիտե իր ժողովուրդին քաշած տառապանքները՝ մահապիսուռ կոտորածը, ավերածությունները: Մահվան անդունդին եզերքը հասած օրերուն հիշատակն ալ անջնջելի է հայ մարդերուն միտքին ու սրտին մեջ: Սակայն, այս բոլորին հակառակ, դեռ ողջ է այս ժողովուրդը, աշխույժ, ստեղծագործ, առողջ և կանքով լեցուն: Եվ այդ՝ մեր ուրախության աղբյուրն է:

Մեր հայրենի կառավարության կողքին, մեր ժողովուրդին մյուս սվանդը հայ ժողովուրդի հոգևոր կյանքին բազմապարյան կեդրոնը հանդիսացող Մայր Եկեղեցին է՝ Սուրբ Էջմիածինն է: Ան ալ կանգուն է այսօր, ան ալ պայծառ է այսօր: Ան ալ պատմության մեջ ապրած է նույն կյանքը, մեր ժողովուրդի տառապանքները, թշվառությունը: Եվ սակայն մեր ժողովուրդի հոգիին պես, որ ստեղծագործ հոգի է, ան ալ չէր կրնար մեռնիլ: Թշնամիներ փորձեր են մարմինը մեռցնել: Բայց անոնք չեն գիտեր, որ մեր ժողովուրդը իր քրիստոնեական հավատքեն և Ավետարանեն սորված է չվախնալ մարմինը սպանողներեն: «Վախցեք միայն անոցմե, որոնք կարող են հոգին մեռցնել»:

Այս երկու ավանդները մեր ուրախության աղբյուրներն են: Եվ այսօր, անցյալի կուլումներուն հակառակ, երբ կտեսնենք մեր հայրենիքը ծաղկած և մեր Սուրբ Էջմիածինը կանգուն, արտասահմանի հայությունը չի կրնար կորսվիլ, իր ինքնությունը կորսցնել: Արտերկրի հայությունը, որ իր հայացքը կուղղե Արարատի գագաթին, որ կտեսնե իր պետությունը իր ժողովուրդին ծոցին մեջ գործող, որ գիտե, թե իր հոգիին աղբյուրը և կեդրոնը եղող Սուրբ Էջմիածինը լույս է երկնքեն իջած, չի կրնար կորավիլ բնավ:

Եվ այս հոգին ահա կպայծառանա մեր հայրենի հողին վրա և այն բոլոր իրագործումներուն մեջ, որոնց մանրամասնյալ պատկերը ներկայացուցիք Դուք մեզի»:

Սրբազան հոր խոսքից հետո, ֆրանսահայ հասարակական գործիչ, փարիզի հայոց եկեղեցու կենտրոնական վարչության անդամ, իրավաբան Էմիլ Ասլանյանը հանդես է գալիս հետևյալ սրտառուչ ելույթով.

«Սփյուռքահայության ներկայացուցիչների անունից հաճեցեք ընդունել մեր ողջույնները և շնորհակալությունները Ձեր ջերմ ընդունելության համար:

Խոսել բոլորի անունից աջանց լավ տիրապետելու մեր մայրենի լեզվին, դժվար կլիներ ինձ համար, եթե համոզված չլինեի, որ այս օրերին ամենքս էլ ունեցանք նույն հիացմունքը և հպարտությունը մեր վերածնված Հայաստանի հանդեպ, ինչ որ կարելի է արտահայտել մեր հոգուց բխած մի քանի պարզ խոսքերով:

Մեկանից նրանք, ովքեր արդեն առիթ են ունեցել այցելելու մայր հայրենիք, ավելի ու ավելի են համոզվում, որ նա օր-օրի զարգանում, բարգավաճում և վստահ ու արագ քայլերով առաջ է գնում: 1973-ին էր, երբ առաջին անգամ այցելեցի իմ հայրենի երկիրը և այժմ տեսնում եմ տասը տարվա ընթացքում հարյուր տարվա փոփոխություններ՝ նոր կառույցներ, մետրոպոլիտեն, օդանավակայաններ, նոր երկաթուղային գծեր, նոր լայն ու գեղեցիկ պողոտաներ, մշակույթի նոր օջախներ:

Այն, ինչ որ տեսանք, լսեցինք ու ապրեցինք, անմահացրեց մեր սրտերում հայ ժողովրդի մեծ բանաստեղծի հուլիչ երգը.

«Հե՛յ ջան հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես,
Սարերդ կորած երկնի մովի մեջ,
Ջրերդ անուշ, հովերդ անուշ...»
Միայն բալեքդ օտար երկրի մեջ:

Այո, մենք, որ այսօր գտնվում ենք Երևանում մեծապատիվ Վեհափառ Հայրապետի հրավերով, մեր մայր հայրենիքի հարազատ բալեքն ենք օտար երկրներում ապրող:

Այս ուրախալի առիթով թույլ տվեք մեզ շնորհավորել մեր թանգակին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան 75-ամյակը, մաղթել նրան քաջառողջություն և երկար կյանք:

Թույլ տվեք նաև ցանկալ Ձեզ, որպես մեր հայրենի երկրի ղեկավարի, նորանոր հաջողություններ Ձեր աշխատանքներում և ամենայն բարիք»: